ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/94

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի կողմից 08.11.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/94 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 08.11.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունն ուսումնասիրելով «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար «Աշխատակիցների կամավոր բժշկական ապահովագրության ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված բաց ընթացակարգի թիվ «3-Страх-2018-МЭК»

ծածկագրով հրավերը (այսուհետ՝ Հրավեր), բացահայտել է, որ առկա է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) խախտումներ, որոնք հանգեցրել են Ընկերության իրավունքների և օրինական շահերի ոտնահարմանը, մասնավորապես.

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն 2018 թվականի կարիքների համար հայտարարվել է «3-Страх-2018-МЭК» ծածկագրով բաց մրցույթը (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որի իրականացման համար սահմանված կարգով հաստատված Հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), մասնավորապես՝ Հրավերի 4.5. կետով սահմանված «Մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջներ» հատվածում ներառված են մրցույթի մասնակիցների նկատմամբ առաջադրվող չափանիշներ, որոնցից 4.5.1. կետի e) թվարկումը խտրական է և համարժեք չէ, չի բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից, հակասում է Օրենքի դրույթների պահանջներին և ուղղակիորեն հանգեցնում Ընկերության շահերի ոտնահարմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Սույն օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գնումների կատարման կարգը.

2) էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը.

3) էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը.

4) գնումների պլանավորման, գնման առարկայի բնութագրերի հաստատման, գնումների նախնական հսկողության, պայմանագրերի կատարման, կառավարման և ֆինանսավորման կարգը.

5) պետություն-մասնավոր գործընկերության գործարքների տեսակները, այդ գործարքների բնութագրերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև բնութագրերի կազմման և հաստատման կարգը.

6) սույն օրենքով նախատեսված գնում կատարելու ընթացակարգերի կիրարկման կարգը և դրանց առանձնահատկությունները.

7) գնահատող հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը.

8) հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները.

9) պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը.

10) գնումների համակարգողներին որակավորում շնորհելու և նրանց շարունակական մասնագիտական վերապատրաստում անցկացնելու կարգը.

11) գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը.

12) սույն օրենքով նախատեսված փոխկապակցված անձանց հասկացությունը և այդ անձանց կողմից գնման ընթացակարգերին մասնակցության սահմանափակման դեպքերը.

13) ընտրանքային կարգով պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերը և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջները՝ սույն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների պահպանման տեսանկյունից գնահատման կարգը.

Օրենքի 13-րդ հոդվածի 1-2-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Վերը նշված դրույթի վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ Հրավերում չեն կարող պարունակվել այնպիսի դրույթներ, որոնք կսահմանափակեն այս կամ այն մասնակցի մրցունակությունը, դրանք չեն կարող լինել խտրական և չեն կարող ներկայացնել հնարավոր մասնակիցներին ուղղված այնպիսի պահանջներ, որոնք կպարզեցնեն կամ կբարդացնեն գործընթացը, չեն բխի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից, ինչպես նաև անուղղակիորեն կզրկեն ոլորտում առկա լիցենզավորված սուբյեկտներին գնման գործընթացին մասնակից լինելու իրավական հնարավորությունից:

Վերլուծելով Հրավերի պահանջները՝ Ընկերությունը տեսնում է ակնհայտ խտրական մոտեցում և անհամարժեք չափանիշի սահմանում, մասնավորապես 4.5.1. ենթակետով սահմանված պահանջներից e) թվարկմամբ սահմանվել է. «Առնվազն 10 բժիշկ (որակավորումը՝ հետբուհական նեղ բժշկական մասնագիտական (օրդինատուրա), կրթության մասին փաստաթուղթ (վկայական), ապահովագրական ընկերությունում աշխատանքային փորձը՝ առնվազն 1 տարի, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը՝ բժիշկ-փորձագետ)»:

Ընկերությունը գտնում է նախ, որ այն համարժեք չէ և չի բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից, մասնավորապես տվյալ քանակի սահմանումը չի երաշխավորում պայմանագրով սահմանված պարտավորությունների պատշաճ կատարումը, քանի որ հնարավոր է նույնիսկ մեկ կամ մի քանի բժիշկ փորձագետի միջոցով ունենալով բժշկական

կենտրոնների համագործակցության լայն շրջանակ իրականացնել 10.000 և ավել ապահովագրված անձ ունեցող պայմանագրի սպասարկում, քանի որ ներկա գործընթացներն կազմակերպվում են բացառապես էլեկտրոնային եղանակով, գործընկեր բուժկենտրոնների ներսում տեղակայված ապահովագրական ընկերության պատասխանատուների միջոցով՝ հարմարավետություն ստեղծելով հենց առաջինը ապահովագրված անձանց համար:

Ավելին, անհայտ է, թե տվյալ թվաքանակի սահմանման պահանջն ինչպես է հիմնավորվում, ինչպես է այն ընդհանրապես սահմանվել, ինչու Պատվիրատուն չի սահմանել օրինակ 7 կամ 13 բժիշկ փորձագետի առկայության պահանջ:

Այսինքն, տվյալ պահանջն ի սկզբանե սահմանված չի եղել Պատվիրատուի կողմից գնման գործընթացի վերաբերյալ առաջին անգամ 16.07.2018թ. Հրավեր սահմանելով և նվազագույնն անհասկանալի է տվյալ պահանջի սահմանման նպատակը և Պատվիրատուի ակնկալիքների փոփոխությունների դրդապատճառները, ինչու տվյալ պահանջի սահմանումն արդիական չէր դեռևս 16.07.2018թ. հրապարակված Հրավերի պարագայում, երբ այդ նույն Հրավերով սահմանված մի շարք խտրական դրույթների վերաբերյալ բողոք է ներկայացվել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ կողմից և ի կատարումն բողոքի Հրավերից հեռացվել են խտրական դրույթները, փոխարենը նոր հրավերով սահմանվել է նոր ոչ համարժեք և մտացածին դրույթ, որը հարմարեցված է կոնկրետ մեկ ապահովագրական ընկերությանը:

Այսպիսով, Ընկերությունը գտնում է, որ տվյալ պահանջի սահմանումը համարժեք չէ և ուղղակիորեն չի բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից, այն մտացածին և հարմարեցված է՝ նպատակ ունենալով արհեստական խոչընդոտի միջոցով ուղղակիորեն չթույլատրել լիցենզավորված սուբյեկտներին մասնակցել տվյալ գործընթացին:

Վերոնշյալի հիման վրա՝ Հրավերն ինքնին առաջացնում է մրցակցության խաթարում. չէ՞ որ գնումների գործընթացի կազմակերպման բուն նպատակն է մրցույթի մասնակիցների համար մասնակցության հավասար պայմանների ստեղծումը, որի արդյունքում հաղթող է ճանաչվում որակական կամ գնային առավել փոխշահավետ առաջարկ ներկայացրած մասնակիցը: Ընկերությունը գտնում է, որ տվյալ իրավիճակում

գործ ունենք հայտարարված այնպիսի մրցույթի հետ, որն անուղղակիորեն ոչ միայն սահմանափակում է մասնակիցների մրցունակությունը, այլ նաև՝ Օրենքով արգելված չափանիշներ և ձևական խոչընդոտներ է առաջացնում գործընթացի՝ սահմանված կարգով կազմակերպման և անցկացման համար:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Ընկերությունը գտնում է, որ Հրավերի դրույթները հակասում են նաև գնումների գործընթացի կազմակերպման հիմնարար սկզբունքներին:

Ընկերությունը վկայակոչել է Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերը, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետը, 9-րդ մասը, 51-րդ հոդվածի 1-ին մասը:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «3-Страх-2018-МЭК» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 30.11.2018թ. թիվ Ն/ՏՍ-39/02-9024 գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ վերջինս հարցում է կատարել ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերություններին՝ պարզելու համար արդյոք վերջիններս բավարարում են բողոքի հիմքում ընկած փաստական հանգամանքին, այն է՝ հրավերի 4.5.1. կետի «e» պարբերությամբ սահմանված պահանջին, թե ոչ:

Ի պատասխան Ընկերության կողմից կատարված վերոնշյալ հարցման՝ ստացվել են երեք ապահովագրական ընկերությունների պատասխան նամակները, որոնցով հաստատվել է այն հանգամանքը, որ գործող ապահովագրական ընկերությունների

մեծամասնությունը, այն է՝ վեցից չորսը չեն համապատասխանում վերոնշյալ պահանջին (հիմքերը կցվել են դիրքորոշմանը): Իր հերթին Ընկերությունը հայտնել է, որ տվյալ գնման ընթացակարգի մասնակցության պահի դրությամբ ունի 8 բժիշկ-փորձագետ հետբուհական նեղ բժշկական մասնագիտական (օրինատուրա) որակավորմամբ, որից 5-ի աշխատանքային փորձն ապահովագրական ոլորտում 1 տարի և ավել է:

Ընկերությունը գտնում է, որ բողոքը հիմնավորվում է ստացված փաստաթղթերով, քանի որ տվյալ պահանջին չհամապատասխանելու հիմքով ապահովագրական ընկերությունները զրկված են գնման ընթացակարգին մասնակցելու իրավունքից, ուստի Ընկերությունն ամբողջությամբ պնդում է բողոքը և խնդրում է պարտավորեցնել «3-Страх-2018-МЭК» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընթացակարգը հայտարարել չկայացած:

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.11.2018թ. ժամը 10:10-ին և 23.11.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 14.11.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև հայտնել, որ եթե Պատվիրատուն կատարի համապատասխան փոփոխություններ հրավերի մեջ, ապա Ընկերությունը կբավարարվի միայն այդ պահանջով:

2. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն 22.11.2018թ. թիվ 2/8-126 գրությամբ հայտնել է, որ բողոքը չի բխում ինչպես գնման առարկա հանդիսացող առողջության ապահովագրության ծառայությունների առանձնահատկություններից, այնպես էլ դրանց մատուցման որակին Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջների բնույթից՝ ելնելով հետյալ նկատառումներից.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-4-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկություններից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության

որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 64-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանակա-հատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				

2.				
..				

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատված գրավոր համաձայնություններ՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

Նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Պատվիրատուի կողմից իր կարիքների համար առողջության ապահովագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «3-Страх-2018-МЭК» ծածկագրով բաց ընթացակարգ:

Հրավերի տեխնիկական առաջադրանքը տրամադրվում է «Ռուս Հիդրո» ԲԲԸ կողմից:

Ընթացակարգի հրավերի 4.5 կետի 4.5.1 ենթակետով սահմանվել են մասնակիցների նկատմամբ հիմնական պահանջները, որոնց թվում (e) կետով սահմանվել է «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի նկատմամբ պահանջը՝ առնվազն 10 բժիշկ (որակավորումը՝ հետբուհական նեղ բժշկական մասնագիտական (օրդինատուրա), կրթության մասին փաստաթուղթ /վկայական/, ապահովագրական ընկերությունում աշխատանքային փորձը՝ առնվազն 1 տարի, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը՝ բժիշկ-փորձագետ):

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն բողոքով նշել է, որ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի համար պահանջվող բժիշկ-մասնագետների քանակական շեմի նախատեսումն արհեստական խոչընդոտներ է ստեղծում մրցակցության համար:

Այս տեսանկյունից Պատվիրատուն գտնում է, որ բողոքարկողի նման պնդումն անհիմն է, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված

պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Միևնույն ժամանակ սույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 64-րդ կետով նախատեսված է, որ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատման համար հրավերով պահանջում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին, իսկ եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝ հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները նույն կետով նախատեսված ձևով:

Նշված նորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնակցի «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով հրավերով կարող են նախատեսվել համապատասխան պահանջներ, որոնց գնահատման կարգը նախատեսվում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 46-րդ կետով, ինչպես նաև հրավերով: Ընդ որում՝ Բողոքարկողի կողմից վկայակոչված փաստարկների շրջանակներում, որևէ սահմանափակում նախատեսված չէ հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի հետ կապված պահանջներ՝ այդ թվում նաև քանակական, սահմանելու համար: Ինչ վերաբերում է սահմանված քանակական պահանջի խտրական լինելու վերաբերյալ Բողոքարկողի պնդմանը, Պատվիրատուն գտնում է, որ նման պնդումն անհիմն է, քանի որ նշված պահանջը Պատվիրատուի կողմից նախատեսվել է ըստ վերջինիս կարիքի և որևէ կերպով չի խոչընդոտում մասնակիցների՝ տվյալ գնման

գործընթացին մասնակցելու իրավունքի իրացմանը և չի հանդիսանում խտրական պահանջ:

Ուստի Պատվիրատուն գտնում է, որ Ընկերության ներկայացրած բողոքը չի կարող դիտարկվել որպես խտրական, քանի որ չի հանգեցնում գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, այլ ուղղված է ապահովագրական ծառայությունների առավել որակյալ և մատչելի կազմակերպելուն և մատուցելուն և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Այսպիսով՝ Պատվիրատուն գտնում է, որ Ընկերության ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն խնդրել է հաշվի առնել, որ նույն բովանդակությամբ բողոքի վերաբերյալ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 26.04.2018թ. կայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/56 որոշումը, որի համաձայն ներկայացված բողոքը համարվել է անհիմն և մերժվել:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.11.2018թ. ժամը 10:10-ին և 23.11.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 14.11.2018թ. ժամը 10:10-ին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր առարկել են բողոքի դեմ՝ հայտնելով, որ արդեն իսկ երեք կազմակերպություն հայտ է ներկայացրել ընթացակարգին մասնակցելու համար, հետևաբար չի կարող Ընկերության կողմից վիճարկվող հրավերի պահանջը դիտարկվել որպես խտրական:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/94 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/94 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կարիքների համար կամավոր բժշկական ապահովագրության

ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է «3-Страх-2018-МЭК» ծածկագրով բաց մրցույթ:

2. Ընթացակարգի հրավերի 4.5-րդ կետի 4.5.1 ենթակետի «e» պարբերությամբ որպես մասնակցին ներկայացվող պահանջ սահմանվել է՝ առնվազն 10 բժիշկ (որակավորումը՝ հետբուհական նեղ բժշկական մասնագիտական (օրդինատուրա), կրթության մասին փաստաթուղթ (վկայական), ապահովագրական ընկերությունում աշխատանքային փորձը՝ առնվազն 1 տարի, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը՝ բժիշկ-փորձագետ):

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհր Անանյանս, ուսումնասիրելով «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի 08.11.2018թ. բողոքը և լրումն բողոքի ներկայացված դիրքորոշումը և կից փաստաթղթերը, «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 22.11.2018թ. թիվ 2/8-126 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կարիքների համար կամավոր բժշկական ապահովագրության ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է «3-Страх-2018-МЭК» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի 4.5-րդ կետի 4.5.1 ենթակետի «e» պարբերությամբ որպես մասնակցին ներկայացվող պահանջ սահմանվել է հետևյալ պահանջը. առնվազն 10 բժիշկ (որակավորումը՝ հետբուհական նեղ բժշկական մասնագիտական (օրդինատուրա), կրթության մասին փաստաթուղթ (վկայական), ապահովագրական ընկերությունում աշխատանքային փորձը՝ առնվազն 1 տարի, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը՝ բժիշկ-փորձագետ):

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ կազմակերպությունների հաստատած գնումների կատարման կարգերով:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի 30.12.2008թ. որոշմամբ հաստատված «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կարիքների

համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի 8.2.2.3-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ մրցույթային փաստաթղթերը պետք է պարունակեն մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջները և այդ պահանջներին համապատասխանության հաստատման կարգին ներկայացվող պահանջները:

Նույն կարգի 8.2.8.9-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ չափանիշները կարող են վերաբերել մասնակցի և հայտարարագրված համամասնակիցների (ենթակապալառու-ների) հուսալիությանը:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կարիքների համար կամավոր բժշկական ապահովագրության ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «3-Страх-2018-МЭК» ծածկագրով բաց մրցույթի հրավերով որպես մասնակիցներին ներկայացվող պահանջ նախատեսվել է առնվազն 10 բժշկի առկայությունը (որակավորումը՝ հետբուհական նեղ բժշկական մասնագիտական (օրդինատուրա), կրթության մասին փաստաթուղթ (վկայական), ապահովագրական ընկերությունում աշխատանքային փորձը՝ առնվազն 1 տարի, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը՝ բժիշկ-փորձագետ):

Բողոքաբերը գտնում է, որ նշված պահանջը խտրական է և հանգեցնում է մասնակիցների շրջանակի խիստ կրճատման, քանի որ ՀՀ-ում գործող ապահովագրական կազմակերպությունների մեծամասնությունը չի բավարարում նշված պահանջին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գնումների կատարման կարգերը չեն կարող հակասել սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Միևնույն ժամանակ նույն հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Ուսումնասիրելով «3-Страх-2018-МЭК» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերության կողմից ներկայացված՝ ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրված այն տեղեկատվությունը, համաձայն որի վերջիններս չունեն հրավերի վիճարկվող պահանջին համապատասխան չափանիշ, այնուամենայնիվ, գտնում եմ, որ Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջը՝ համապատասխան պահանջներին բավարարող 10 բժշկի առկայության վերաբերյալ, չի կարող դիտարկվել որպես խտրական պահանջ, քանի որ այն համապատասխանում է Պատվիրատուի կարիքին և չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սկզբունքներին: Անհրաժեշտ է նաև նկատել, որ նշված պահանջը չի կարող դիտարկվել որպես խտրական այն իմաստով նույնպես, որ իր բնույթով չի ենթադրում այնպիսի չափանիշ, որը կարող է պատկանել միայն այս կամ այն կոնկրետ մասնակցին և հանգեցնել այլ մասնակիցների մասնակցության իրավունքի իրացման համար արհեստական խոչընդոտների առաջացմանը:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նաև նշել, որ «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն 13.04.2018թ. նմանատիպ բողոք է ներկայացրել «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից

կազմակերպված «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում՝ վիճարկելով հրավերով որպես «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշ սահմանված «առնվազն 11 բժիշկ (որակավորումը՝ հետբուհական նեղ բժշկական մասնագիտական (օրդինատուրա) կրթության մասին փաստաթուղթ (վկայական), ապահովագրական ընկերությունում աշխատանքային փորձը՝ առնվազն 1 տարի, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը՝ բժիշկ-փորձագետ)» պահանջը: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 26.04.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/56 որոշմամբ մերժել է Ընկերության բողոքը գտնելով, որ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով հրավերով կարող են նախատեսվել համապատասխան պահանջներ, որոնց գնահատման կարգը նախատեսվում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 46-րդ կետով, ինչպես նաև հրավերով: Ընդ որում՝ Ընկերության կողմից վկայակոչված փաստարկների շրջանակներում որևէ սահմանափակում նախատեսված չէ հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի հետ կապված պահանջներ՝ այդ թվում նաև քանակական, սահմանելու համար: Դրա հետ մեկտեղ նշված պահանջը Պատվիրատուի կողմից նախատեսվել է ըստ վերջինիս կարիքի և որևէ կերպով չի խոչընդոտում մասնակիցների՝ տվյալ գնման գործընթացին մասնակցելու իրավունքի իրացմանը և չի հանդիսանում խտրական պահանջ:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «3-Страх-2018-МЭК» ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված Ընկերության կողմից վիճարկվող պահանջը խտրական չի կարող դիտարկվել, քանի որ այն չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված գնման գործընթացի կազմակերպման սկզբունքներին և և բխում է Պատվիրատուի կարիքից: Ուստի գտնում եմ, որ «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի կողմից 14.11.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ